

թեան աղիողորմ աղաղակները
զիպչում են իր լսողութեանը,
սկսում են անհանգստացնել ի-
ռան:

Միայն սովին զո՞չ եղած չա-
յաստանը յիշեցրեց Եւրօպային
որ կայ աշխարհիս երեսին մի
ազգ, որ կոչվում է Հայոց
ազգ....

Բայց և այն տպաւորութիւնը, որ գործեց Եւրօպայում թիւքաց Հայաստանի մէջ տիրող սովը, Հետզհետէ պիտի Ճնջվէր, չը նայելով Գլադ-

ստօն-Գրէսվելի մինիստրութեան
ջանքերով Բ. Դրանը ներկա-
յացրած եւրօպական պետու-
թիւնների համաձայն գրու-
թիւնը, որի մէջ և Հայա-
տանի համար վարչական բա-
րենորոգումներ էին պահանջ-
վում, եթէ այժմ լուր չը
տարածվէր որ թիւրքաց հա-
յերը, Թիւրքիայի բոլոր հպա-
տակ ազգերից այդ ամենահա-
զանդ, ամենահամբերող, ամենա-
ստրուկ ազգը, վերջապէս չը դի-
մանալով Թիւրքիայի բարբարո-
սութեանը, զէնքը ձեռին ապա-
տամբվեցան իրանց դարեւոր Ճըն-
շողը դէմ:

Եւրօպայի առջև, եւրօպական
դիպլոմատիայի աչքում գին չու-
նի մի տանջվող ազգի լուռ բո-
ղոքը—որքան էլ անտանելի լինի
նրա տանջանքը,—նրա աչքում
գին ունի միմիայն մի ազգի
դրական բողոքը, ընդդիմադրու-
թիւնը ձնշողե դէմ։ Եւրօպան
սկսում է յարգել մի ազգութիւն
միայն այն րօպէից, երբ այն
ազգը՝ զէնքը ձեռին սկսում է
իր և իր թշնամու արիւնը թա-
փել ազգային ազատութեան հա-
մար։

Ազգը միայն այն ժամանակ
արժանի է յարգանքի, ասում է
Եւրօպան, երբ կենդանութեան
նշան է ցոյց տալիս, իսկ կեն-
դանութեան նշան ցոյց տալ-
զէնքը ձեռին ապստամբվելն է:

Եւրօպայի քաղաքականութիւնը այս է. թող մի ազգ ինքն իր ոյժով ցոյց տայ թէ արժանի է գոյութեան, որպէս մի ազգութիւն, — և այն ժամանակ մենք էլ կը յարգենք նրան և նրան ազգութիւն կը ճանաչենք:

Եթէ մի ազգ քաջութիւն և
ոյժ ունի ապստամբվել կամ շր-
նորհ ունի խաղաղ ճանապարհով
իրան շրջապատող, քաղաքակր-

թութեան աւելի ստոր աստիշ
ձանի վրա կանգնած ուրիշ ազ-
գերին կուլ տալ, — այն ժամա-
նակ այդ ազգը արժանի է ամեն
տեսակ յարգանքի....

Հայերը սովորութիւն ունեն
պարծենալու որ համբերող են
դէպի ուրիշ ազգերը, երբէք չեն
սիրում իրանց շըջապատող կի-
սավայրենի ազգերին հայացնել...

Բայց այդ տեսակ ազգութիւն
անուանում են Եւրօպայում ան-
ընդունակ, մեռած մի ազգու-
թիւն:

Եթէ հայերը ներկայանային
Շերլինի կօնգրէսին քիւրդերին,
ասօրիներին, եզեղներին և այլ
ազգութիւններին հայացնելուց
յետոյ, ներկայանային որպէս մի
զօրեղ, բազմաթիւ ազգութիւն,
եթէ բացի սորանից կարող էին
պարծենալ զէնք գործածելու և
արիւն թափելու ընդունակու-
թեամբ,— այն ժամանակ նրանք
Շերլինի կօնգրէսից անհամեմատ
աւելի շատ կը ստանային, քան
թէ ստացան, թիւրքաց հայերը
արդէն այժմ ճանաչված կը լի-
նէին, որպէս քաղաքական կեան-
քով ապրելու արժանի մի ազ-
գութիւն:

¶. U.

ՆԵՐՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՆԱՄԱԿ ԵՅՍԿԻՑ

Համակրելով Տաճկաշատատանի ներկայ տարւոյս
մերազնէից թշուառ դրութեան արձագանքը, որն
լսելի եղեւ մինչ Ռուսաստանի խորեբն՝ ես ես ի միջի
ալրոց ցանկացաց չը մնալ անտարբեր, կազմելով
մի առանձին թերթ հանգանակութեան դիմեցի
տեղւոյս սակաւաթիւ երիտասարդ բարեկամացս
խնամքին, նիւթական օժանդակութիւնը չայցելու,
որից գոյացաւ 16 րուբլի փոքրիկ լուման, աչա
ուղարիւմ եմ յարգոյ խմբագրութեանդ. խնդրեմ
բարեհաճէք դուք զայն կարևոր պատշաճագոյն տը-

Խորէնութիւնն առնել, կամ ուղարկել Վանայ ու
վելոց մասնագողակին և կամ Խրիմեան հայրեկի
նոր բացած հիւանդանոցին, իսկ նուիրատուաց ազգ-
անունին չը զլամաք ի տիպ մուծելու։ Մարտիրոս
և Պետրոս Ուկաննեանց Յ. ր., Յովհաննէս Կիստեանց
1 ր., Մկրտիչ Անկիշաննեանց 1 ր., Կարապետ Մը-
կրտեանց 1 ր., Պետրոս Նաղմեանց 1 ր., Մի-
քայէլ Չորչուիեանց 1 ր., Կարապետ Աճեմեանց 1
ր., Մարտիրոս Չորչուիեանց 2 ր., Եղիսա Պողկու-
տականց 1 ր., Արքայի Պատուանց 1 ր., Զա

Նիկեանց 1 ր., Օլքայէլ Քամբչշիկեանց 1 ր., Թէոդորոս Խարատժանանց 1 ր., Գաբրիէլ Զորչոփեանց 1 ր., Մկրտիչ Սուպաշեանց 1 ր., Խոկ անյայտունն յանձն էար զծախը փօստայի:

Մարտիրոս Ուկանեան

Սպասութիւն ՅՈՒ-ին
Մայիսի 10-ին ուղարկել էի յօվուտ Վանա ու սովորութեան 394 ր., հաւաքեցի և նոյն սովորութեանը համար 52 ր., խնարհաբար խնդրելով, որ բարեհանձեք հասուցանել այն ուր հարկն է: Աչանուիրատուների ցուցակը: Մայրանէ Կուլիեանց 3

ր., Թշնուչի Զիոնիսեանց 3 ր., Սարգիս Միհեմ-
րեանց 3 ր., Յովհաննէս Խնձորեանց 3 ր., Անդյայտ
ոմն 3 ր., Յովհաննէս Խաղիզով 5 ր., Աննա Սա-
տեղեանց 1 ր., Մելքոն Պապիեան 2 ր., Աննա
Պալիեանց 3 ր., Աննա Զետունեանց 2 ր., Խկուչի
Փոփովայ 3 ր., Եղիսարեկ Օվանեսեանց 3 ր., Սա-
դաչ Խոճաւեան 1 ր., Լուսինա Խոճեան 1 ր., Եր-
բես Միեսերեան 2 ր., Պարոն Խոճեան 1 ր., Հր-
ուիսիմիկ Ասմաեան 2 ր., Ի'аталья Молодская
1 ր., Գայանէ Սրմարեշեան 2 ր., Նօյեմզար Ստե-
րասորեան 1 ր., Աննա Կուզնեցովա 3 ր., Իսրովի
Շարշնիկեան 1 ր., Մարյա Տաշիևա 1 ր., Օльга
Տաշիևա 3 ր.: Ընդամենը 52 ր., հանելով այդ
գումարէն փոստի ծախքը 52 կ., կը մնայ 51 ր.
48 կոպէկ:

Shtetl ***

ՆԵՐՔԻՆ ՀՈՒՐԵՐ

ՄՈԶԴԻՔԻՑ գրում են մեզ. Օգոստոսի 17-ին և
23-ին, երկու ամսվամ, այնքան ահագին բազմու-
թեամբ մորեկսի խումբեր անցան քաղաքի վրայով,
որ նրանց շատութիւնից արգելվում էր արևի լոյսը,
և ժամերով խաւար էր տիրում քաղաքի մէջ: Այդ
միջամտների արշաւանքը ուղղված էր դէպի ՊԵՐ-
ՄԱՐԻ Կողմերը:

Մեզ չաղորդում են, որ Թիֆլիսի քահանաներից
մէկը ցերեկով գնում է Կալիչայա-Բալկայ կոչված
թաղը և բաղլսում է մի կնոջ դուռը: Նրան ճարյ-
սում են, թէ ինչ է կամենում: Տէր չայրը պատաս-
խանում է, թէ իր կինը վախճանված է, ծծկեր
երեխայ է թողել, և ծիծ տուող կին է պտում:
Նրան ասում են, թէ այս տանը այս տեսակ կին
չը կայ: Յետոյ նա խնդրում է, որ իրան թոյլ տան
ներս մտնել, մի փոքր չանգատանալ, որովհետեւ
շատ յոցնած է: Բարեսիրտ տան տիկնոջ հիւրասի-
րութիւնը վարձատրվում է նրանով, որ տէր-չայրը
սկսում է լրբութեան զանազան ցոյցեր անել, ո-
րոնց պատճառով նրան խայտառակութեամբ ար-
տաքսում են:

Մեղ զրում են ՎԵՐԻՆ-ԱՂԴԱՆ գիւղից: Ղաղա-
խի գաւառի հոգեոր իշխանութեան գործակալ Ս.
Խ... քաշանայի կինը վախճանված լինելով, պա-
չում է իր ժետ մի կին, որի ամուսին այրը դեռ
կենդանի է և անդադար բողոքում է այդ յափշ-
տակութեան դեմ, բայց ոչ ոք նրա ձայնը չէ լսում:
Թիթեակիցը աւելացնում է, որ տէր հայրը հրապո-
րել է այդ կնոջը նրանով, որ իր բողոր հարատո-
թինը կտակել է նրա անոնով, որովհետև ինքը
ժառանգ չունի:

Մեզ հաղորդում են, որ «Մշակի» 157 համարում տալիքած լուրը, իբր թէ ՀԱԽԱԲԱՐԻ Զորացաց եկեղեցու երեցինսան պ. Յ. Նազարեանցի հաշիների մէջ խարդախութիւններ են յայտնվել, — սխալ է: Պ. Նազարեանցը խղճմտաւոր կերպով կատարել է իր յանձն առած պաշտօնը և նրա հաշիների մէջ նկատված է ձշտութիւն միայն: «Մշակի» խմբագրութիւնը այդ կնճռութ բանակուիք մասին, այսուհետեւ որ և ից մեծաւ անհետ պահ:

ՇԱՄԱՆՈՒՅ դարձեալ բողոքներ են յայտնում
վարդասկառի մասին, որ ծառայում է տեղային հո-
գուոր առաջնորդի մօս որպէս օգնական և որպէս
խորչրասու: Հայր սուրբը միանդամայն իր ազ-
դեցութեան ներքոյ առնելով մրրազանին, նրան կա-
տարել է տալիս շատ անիրաւացի գործեր, որոնք
պատճառ են լինում ժողովրդի մէջ զանազան երկ-
պառակութիւնների և զգւանք են յարուցանում ամ-
բոխի մէջ: Ժողովուրդը պատրաստվում է իմադիր-
քով զիմել Վեհ. Կաթողիկոսին, որ յիշեալ խոռ-

ԱՐՏԱՎԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

ԱՐՏԱՔԻՆ ՏԵՍՈՒԹԻՒՆ

ՀԱՅԿԱԿԱՆ ԽՆԴԻՐ

«Новое Время» լրագրի մէջ կարդում
ենք Հետևեալ առաջնորդող յօդուածը:
Հայկական խնդիրը, որ Բ. Դրան խար-
դախութեամբ չերնոգօրիական և յունա-
կան խնդիրների պատճառով յետաձգ-
ված էր, այժմ՝ նորից երեան եկաւ:
Թիւրքաց բռնաւութեան, կամայականու-

